Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

978

008
Z-15

008
Ղ-15

07 JUN 2005

Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

2-ՐԴ ԲԱՐԵՓՈԽՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

8620

ՊԵՏՀՐԱՏ 1931 ԵՐԵՎԱՆ

ՀՍԽՀ—ԽՍՀՄ
Հայ. Ա. Մասիսյանի
անվան

10 .06. 2015

978

4193
39

Հր. № 1559 Գրատեսվար № 6270 Գառվիր № 1504 Տիրաժ 3000

Գլխավոր տպարան Ցերեսնոյի

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿԵՆՑԱՂԱՑԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

«Անպրագեռանների յերկրում չի կարելի կոմունիստական հասարակակարգ ստեղծել»։

Ի. ԵՍԻՆ

Հոկտեմբերյան և Նոյեմբերյան հեղափոխությունները բավական ուժեղ թափով ու հիմնովին փոխեցին Հայաստանի պրոլետարիատի հին կենցաղը, նրա ընտանեկան և տնտեսական կյանքի բոլոր ձևերն ու սովորությունները։

Մեր յերկրում պրոլետարիատը քաղաքական իշխանությունը վերցնելով իր ձեռքը՝ սոցիալիստական շինարարության, յերկրի ինդուստրացման համար աշխատանքների հետ միասին՝ դեն է շպրտել հին փտած կենցաղը և լծվել կուլտուրական շինարարության, կուլտուրական հեղափոխության վիթխարի գործին և կերտում է այսոր նոր կենցաղ, պրոլետարական կարմիր կենցաղ։

Մեր հնգամյա պլանը, որը վոչ այլ ինչ է, յեթե վոչ սոցիալիզմի կառուցման պլանը, վոչ միայն հեղաշրջելու յե մեր ծանր արդյունաբերությունը և յերկի-

բը լենինաբկելու, ինգուսարացման, այլ և ստեղծելու յե այն կուլտուրական կյանքը, կուլտուրական այն հսկա հեղափոխությունը, որն այսոր՝ մեր կուսակցության ուշադրության գլխավոր մեխերից մեկն է հանդիսանում։

Հնգամյա պլանի հաջող կիրառման և պրոլետարիատի ստեղծած կուլտուրական կյանքի, կուլտուրական հեղափոխության և պրոլետարական կենցաղի վերջնական հաղթանակից է կախված նաև գյուղի կոլեկտիվիզացիան, գյուղատնտեսության վերակառուցումը, հին կենցաղի վերացումը և, վերջապես, կուլտուրական հեղափոխության հաղթանակը։

Միանգամայն անժխտելի յե այն փաստը, որ Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխությունը և նրա հարազատ ծնունդ Նոյեմբերյան հեղափոխությունը բավականաչափ ուժեղ թափով ու ցնցումով յերերել, շարժել ու հեղաշրջել են նաև մեր գյուղը և հին, փտած կենցաղին հակադրել նոր կենցաղը։ Խորհրդային Հայաստանի ներկայիս գյուղը շնորհիվ Հոկտեմբերյան-Նոյեմբերյան հեղափոխության՝ շատ բաներով և փոխվել-առաջադիմել։

Հայաստանի խորհրդայնացումը միանգամայն հեղաշրջեց Հայաստանի աշխատավոր գյուղացու թե քաղաքական, թե տնտեսական, թե կուլտուրական կյանքը և բաց արավ նրանց դասակարգային պայքարի մշուշապատ դիտակցության աչքերը։ Խորհրդային Հայաստանի բանվորն ու գյուղացին ըմբռնեցին խորհրդային իշխանության և նրա ղեկավար կոմունիստական կուսակցության իսկական եյությունը, նրա նպատակները։

Այդ ըմբռնումն ու գիտակցությունը, գլխավորապես այս վերջին հինգ տարվա ընթացքում, ավելի ակնհայտնի դարձավ ու խորացավ։ Հենց իրենց բանվորի, աշխատավոր գյուղացու ձեռքով, նրանց հեղափոխական կամքի ուժով իրար հետևից առաջ յեկան, ստեղծվեցին ու ծաղկեցին սպառողական, գյուղատնտեսական, այգեգործական, տնայնագործական կոոպերացիան, վարկային ընկերությունները, փոկերը, գյուղատնտեսական, մեքենաշտատգործական ընկերությունները, չքավորական խմբակները, զանազան տեսակի արտելները, սովխոզները, կոլեկտիվ տնտեսությունները, խրճիթ-ընթերցարանները, լիկբեզները, «Կորչի անգրագիտությունը ընկ.»-ը, մեծահասակների, գյուղատնտեսական և յերիտդպրոցները, վերջապես տասնյակ հարյուրավոր գյուղական դպրոցներ, տասնյակ հազարավոր աշակերտներով, պարտադիր ուսումը, պատժողները, հասարակական այս կամ այն կազմակերպություններ, կարմիր անկյունները և այլն և այլն։

Բացի վերոհիշյալներից, մեր տարած համառ աշխատանքների արդյունք ու հետևանք են նաև բազմաթիվ շինարարական աշխատանքներ, գյուղական աշխատավոր տարրերի ակտիվացումն ու նրանց լծվելը մեր սոցիալիստական շինարարությանը, կուսակցական, կոմսերիտական և պիոներական կազմակերպությունների աչքի զարնող աշխուժացումն ու ակտիվացումն, բատրակների կազմակերպումը, նրանց մեջ տարած և տարվելիք կուլտուրական, կրթական աշխատանքները և այլն։

Ահա այս բոլորը գալիս են ասելու և ապացու-

ցելու, վոր խորհրդային իշխանությունը խոշոր գործ է կատարել բանվորի և աշխատավոր գյուղացու համար բոլոր ընագավառներում, վոր գյուղացու հին կենցաղի մեջ զգալի ճեղքվածք է առաջ յեկել, ճեղքվածք, վորը պետք է ավելի խորացնել ու լայնացնել։

Սակայն դժբախտաբար պետք է ասել և խոստովանել, վոր գյուղ մտած նոր կենցաղը դեռ թույլ է հին կենցաղի մոտ, վորը համառորեն իր տեղը մեծ դժվարությամբ է զիջում նորին։

Ահա հին կենցաղի համառ դիմադրության և նորի դանդաղ քայլերի պատճառով է, վոր գյուղում տարած և տարվելիք թե սոցիալիստական, թե կուլտուրական և այլ աշխատանքներ հանդիպում են խոշոր խոչընդոտների ու խանգարում, դանդաղեցնում են մեր բոլոր աշխատանքների ընթացքն ու դրոհը։

Գյուղի աշխատավոր մասսաների քաղաքական, տնտեսական, շինարարական, կուլտուրական և այլ հետաքրքրությունը հետևանք է հին, փտած կենցաղի, վորի մեջ հազարավոր տարիներ ապրել ու շնչել են նրանք, և վորոնք, դժբախտաբար, վորպես ժառանգություն անցել են մեզ։ Հին, փտած կենցաղ, վորն ամենախոշոր պատճառներից է մեր անդրպիտության և անկուլտուրականության։ Մի ցավ, մի հոգս, վորն այսոր զերմարդկային անսպառ ուժ, յեռանդ ու դրամական խոշոր միջոցներ է պահանջում վերացնելու և հաղթահարելու այն։

Խորհրդային իշխանության և նրա ղեկավար Կոմունիստական Կուսակցության մղած հուժկու պայքարը՝ քաղաքական, տնտեսական, գյուղատնտեսության վերակառուցման, ինդուստրացման, տրանս-

պորտի ֆրոնտներում և մի շարք այլ բնագավառներում հաջողությամբ տանելուց հետո վերջին 3-4 տարվա ընթացքում, դլխավորապես 1928 թ. սկսած, իր ամենամեծ ուշադրության առարկան, մեխը, աշխատանքի կենտրոնը դարձրել է դեպի կուլտուրական աշխատանքը, անդրպիտության վերացման—կուլտուրական հեղափոխության հրատապ վիթխարի գործը։

Հին կենցաղի մնացորդների, կրոնի ու մի շարք ինքնակար սովորությունների ու յերևույթների դեմ անխնա պայքարելը և կուլտուրական հեղափոխության անհրաժեշտությունն այսոր մեզ համար այնքան է հասունացել, աղաղակող փաստ դարձել, վոր մեր կուսակցության 15-րդ, 16-րդ համագումարները, նրանցից հետո մինչև այժմ յեղած թե Համամիութենական կենտկոմի և թե Հայաստանի կենտկոմի պլենումները բավական լուրջ զբաղվել են կուլտուրական հեղափոխության խնդիրներով և արել մի շարք գործնական վորոշումներ։

Ընկեր Լենինն իր կենդանության ժամանակ, իր վերջին հոդվածներից մեկում կուլտուրական խնդիրների մասին հետևյալն է դրում. «Այդ արմատական փոփոխությունը կայանում է նրանում, վոր մենք առաջ ծանրության կենտրոնը դարձնում էինք, և պարտավոր էինք դարձնել քաղաքական պայքարը, հեղափոխությունը, իշխանության նվաճումները հալլն։ Իսկ այժմ ծանրության կենտրոնը փոխվում է այն չափով, վոր փոխանցվում է խաղաղ կազմակերպչական, «կուլտուրական» աշխատանքի։ Ես պատրաստ եմ ասելու, վոր ծանրության կենտրոնը մեզ համար փոխանցվում է կուլտուրականության, յեթե չլինեին միջազգային փոխհարա-

բերությունները, յեթե հարկադրված չլինեինք պաշտպանելու մեր դիրքերը միջազգային մասշտաբով։ Բայց յեթե մի կողմ թողնենք այդ և սահմանափակվենք տնտեսական փոխհարաբերություններով, ապա մեզ մոտ այժմ իրոք վոր ծանրության կենտրոնը պարփակվում է կուլտուրաբարբարության մեջ։

Ուրեմն սրանից պարզ յերևում է, վոր մեր կուսակցությունը և նրա հանճարեղ առաջնորդ—ընկ. Լենինը վաղուց զգացել են կուլտուրաբարբարության, կուլտուրական հեղափոխության խիստ կարևորությունը, բայց մեր դրությունը միջազգային քաղաքական ջրապտույտում՝ թույլ չի տվել, վոր «ծանրության կենտրոնը մեզ համար փոխանցվի կուլտուրաբարբարության»։

Այսոր կոլտնտեսությունների արագ աճման, գյուղատնտեսության վերակառուցման, մեր յերկրի ինդուստրացման, քաղաքի զործարանային, արդյունաբերական ճյուղերի, ապրանքների աճման հետևանքով, գյուղի շերտավորման, կուլակների բացահայտ աշխուժացման—ակտիվացման հետևանքով ակտիվացում կա չքավորի, բատրակի ու միջակի կողմից։ Ահա այդ պատճառով էլ այսոր մեր գյուղը դարձել է դասակարգային պայքարի թատերաբեմ։ Պայքար, վորից հաղթանակով դուրս գալու համար պետք է ունենալ բավական փորձված և սուր զենք, խելոք և հմուտ տակտիկա ու քաղաքականություն։ Այնպես պետք է անել, վոր չքավորի ու միջակի դաշինքն էլ ավելի ամրանա ու անխզելի դառնա։ Մի դաշինք, վորի մասին խոսել է ընկ. Լենինը և նրա կուսակցությունը։ Դաշինք, վոր կապված պետք է լինի այն ամուր ո-

ղակներով, վոր կռնել ու կոփել է ռուսական հեղափոխական հաղթական պրոլետարիատը։

Եվ այս բոլորն արագ, անսխալ և արդյունավետ կարվի այն ժամանակ, յերբ մենք գյուղում վերացրած կլինենք հին կենցաղը, նրա մնացորդները՝ կրոնը, ասծո քարաշած գաղափարը և գյուղում սաաջ կբերենք կուլտուրական հեղափոխություն։ Կուլտուրական հեղափոխության իմաստը բացատրելու համար ընկ. Լենինը դեռ 1923 թվին ասել է հետևյալը.

«Մեր առջև ծանրանում են յերկու գլխավոր խնդիրներ, վորոնք դարաշրջան են կազմելու։ Դա մեր ապարատի բարեփոխության խնդիրն է, ապարատի, վոր բոլորովին բանի պետքական չե, և վորը մենք ամբողջապես ժառանգել ենք հին ժամանակաշրջանից։

«Այստեղ, հինգ տարվա պայքարի ընթացքում, մենք լրջորեն բարեփոխել վոչինչ չկարողացանք։

«Մեր յերկրորդ խնդիրն է գյուղացիության համար կուլտուրական աշխատանք կատարելը։ Իսկ այդ կուլտուրական աշխատանքը գյուղացիության մեջ, վորպես տնտեսական մի նպատակ, հետապնդում է հատկապես կոոպերացումը։ Լիակատար կոոպերացման պայմաններում մենք արդեն յերկու վոտքով կանգնած կլինենք սոցիալիստական հողի վրա։ Սակայն լիակատար կոոպերացման այդ պայմանը յենթադրում է իր մեջ գյուղացիության այնպիսի մի կուլտուրականություն (հատկապես գյուղացիության, վորպես հսկայական մի մասսայի), վոր այդ լիակատար կոոպերացումն անհնարին է առանց մի ամբողջ կուլտուրական հեղափոխության։

Ահա թե ինչպես է հասկացել ընկ. Լենինը կուլ-

տուրքային հեղափոխությունը և հանձարեղ կերպով բնորոշել նրա կարևորագույն դերն ու նշանակությունը գյուղական հոծ մասսաների ու նրանց աշխատանքների բոլոր բնագավառներում, կուլտուրական կյանքի ասպարիզում։

Գյուղական տնտեսությունների (թե անհատական, թե կոլեկտիվ) աճման, գյուղի շերտավորման և դասակարգային սուր ներհակությունների ու ներկայիս սկսված ուժեղ պայքարի հետևանքով՝ գյուղի աշխատավոր տարրերը բավականաչափ աշխուժացել, ակտիվացել են ու խիստ պահանջ են զգում կուլտուրական սննդի. նրանք ծարավի յան լծվելու կուլտուրական հեղափոխության աշխատանքներին և նվաճելու կուլտուրական բոլոր բարիքները, նվաճելու և ամրապնդելու հեղափոխության դասակարգային իդեոլոգիայի բարձունքները։ Բարձունքներ, որոնք նույնքան կարևոր և նշանակալից են մեր սոցիալիստական, կուլտուրական շինարարության, Հոկտեմբերյան, Նոյեմբերյան հեղափոխությունների նվաճումների տարածման ու խորացման համար, որքան որ քաղաքական, տնտեսական, արդյունաբերական, կոոպերացիայի և կոլեկտիվիզացիայի հրամայողական բարձունքների նվաճումները, որոնց Խորհրդային Միության հեղափոխական ու հաղթական պրոլետարիատը հասել է բավական յերկար, ծանր, բայց բավական համառ ու հերոսական պայքարից հետո։

Պետք է խոստովանել և ընդգծել, որ կուլտուրական հեղափոխության, անգրագիտության վերացման, հին կենցաղի դեմ կռվելու և իդեոլոգիական ֆրոնտում մղվելիք մեր պայքարը բավական լուրջ, միանգամայն

դժվարին պայմաններից ու բայց կոմունիստական կուսակցության և Խորհրդային իշխանության համար նա անհաղթելի ուժ ու դժվարին խոչընդոտ չեն։ Մեր կուսակցությունը դրանից ավելի խոշոր դժվարություններ է հաղթահարել և նրանց ծունկի բերել իր յերկաթե, հզոր, անսասան կարողության ու կամքի առջև։ Այնպես որ նա բավականաչափ ուժ կունենա հաղթանակով դուրս գալու նաև այս պայքարից։ Պայքար, որ տարվում է կուլտուրական հեղափոխության ռազմադաշտում։

Հին կենցաղի, հին ճնշողական սովորությունների դեմ մղվելիք պայքարի և կուլտուրական հեղափոխության ճակատում սկսված կռվի դինքերը պետք է լինեն վերին աստիճանի սուր, փորձված և զգուշ, որպեսզի այդ պայքարի ընթացքում խոշոր սխալներ ու թյուրիմացություններ չկատարվեն, որպեսզի մեր հաղթանակը լինի կատարյալ, և ապահովված լինեն կուլտուրական հեղափոխության հաղթանակներն ու նվաճումները։

Այժմ տեսնենք, թե հին կենցաղի ինչպիսի մնացորդներ, ինչ սովորություններ գոյություն ունեն գյուղում։ Սովորություններ, որոնց դեմ մինչև այժմ շատ աննշան պայքար ենք տարել։ Միայն այս վերջին յերկու տարին է, որ սկսել ենք պայքարել։ Պայքարել այն էլ ավելի ուժեղ, ավելի անողոք, շեշտակի ու անվրեպ։

«Մանկալյ Թերթի 2000 գյուղթղթակիցները, որոնք հանդիսանում են գյուղի ակտիվ, առաջավոր ուժերը, և որոնց վրա լե ներկայումս ծանրացած հին կենցաղի դեմ պայքարելու և նոր կենցաղ ստեղծելու

աշխատանքի խոշոր բաժինը, շարունակ իրենց թղթակցությունների 25—30 տոկոսի մեջ գրում են հին կենցաղի մասին։

ՀԵՐՈՆԻՔ ՑԵՂ ՊՈՒԿ

Մեր գյուղում դեռ բավական համառ կերպով շարունակվում են «ծաղով», «կանչով», «խալաթով» (նվերներ) հարսանիքները։ Այս ձևի, այս տեսակի հարսանիքները վոչ այլ ինչ են, յեթե վոչ շահադիտության, թալանի «քաղաքավարի» միջոցներ։ Հազար ու մի տեսակ ոյինբազությունների են արվում այդ հարսանիքները։ Հազարավոր կուրյոզներ և այլանդակ յերևույթներ են տեղի ունենում այդ հարսանիքների ժամանակ։

«Ծաղով վոչ միայն կուլակներն ու անկուսակցականներն են հարսանիք անում, այլև կուսակցականներից ու կոմյերիտականներից վոմանք։ Գյուղթղթակիցները տասնյակ դեպքերի մասին գրել են «Մահկալ»-ին։ Մեկի փողը հենց վոր վերջանում է կամ թե խոշոր կարիք է ունենում փողի, ել պրծավ։ Նստում է ու ձևաց վորոշում, միջոցը գտնում։ Իր 12—13 տարեկան աղջկան կամ տղային նշանում է իր պես մի «խելոք» մտածողի տղայի կամ աղջկա հետ և առանց ուշացնելու պսակում, «քյաբինը» կտրում, իր հարեվաններին, ծանոթներին, բարեկամներին «պատվում»— թալանում։ Հարսանիքին շատ-շատ ծախսվում է 100-150 ռ., իսկ կանչի, ծաղի, խալաթի ժամանակ հավաքվում է առնվազն 500 ռուբլի դրամ և ուրիշ շատ նվերներ։

Ահա այդ է պատճառը, վոր յերբեմն մեր կուսակցականներից և կոմյերիտականներից վոմանք կարթակղվում և ամուսնանում են ծաղով, իրենց տընտեսությունը բարձրացնելու, փող վաստակելու նպատակով։

Ծաղով կատարված և կատարվող հարսանիքները կամ ամուսնությունները լինում են տերտերով, յեկեղեցու միջոցով և պսակադրության համար բավական չաղ վարձատրություն են տալիս «սուրբ» տերտերներին։

Ըստ «Մահկալ»-ի թղթակիցների գրածների՝ ամուսնությունների համարյա 70 %-ը տեղի չեն ունենում բռնի ուժի և զանազան սպառնալիքների տակ։ Գյուղում յեթե մի աղջիկ աչքաղրած է լինում մի տղայի վրա, և փոխադարձաբար նրանք սիրում են իրար, աղջկա հայրը, համաձայն շահադիտական և այլ նպատակների, չի տալիս նրան և զոռով ամուսնացնում է իր ուզած տղայի հետ և յերբեք չի մտածում այն մասին, վոր դրանով դժբախտացնում է իր զավակին։ Արժե, վոր այս մասին թույլ տանք, վոր խոսի «Մահկալ»-ի գյուղթղթակիցը։ Նոր Բայազետի Ղարանլուղ գյուղից թղթակից Մխիկն «Իր կամքով գնաց» թղթակցության մեջ գրում է. «Հունվարի 30-ին Արսեն Բուլոյանի տղային նշանեցին բռնի կերպով։ Աղջկան հարց եյին տալիս՝ առնում ես այս տղային, թե վոչ, իսկ աղջիկը պատասխանում եր՝ «վոչ», սակայն սրանով չի վերջանում. զոռով տանում են Զագս։ Աղջիկը Զագսում ասում է, վոր այդ տղային չի սիրում, այլ սիրում է այս-ինչ կարմիրբանակայինին»։

Շատ ընտանիքներ ել, բացի շահադիտական նպատակներից, ունեն մի այլ նպատակ։ Դա հեռակայն

և. ամեն կերպ, ինչ գնով էլ լինի, աշխատել աղջիկ փոխել գյուղի ունևոր ընտանիքից, գյուղի զոռբա թալֆայից կամ թե չէ այնպիսի ընտանիքից, որից խորհրդային վարչական որգաններում կամ կուսակցական կազմակերպություններում աշխատողներ կան։ Գյուղի մեշչանը, արբվատելն այն կարծիքի չեն, որ դրանց միջոցով գյուղում կարող կլինի և առհասարակ կարելի չէ ապահովել իր պատիվն ու հեղինակությունը և վայելել որոշ արտոնություններ։

Լենգավառի Վ. Թալինի մի կուլակային ընտանիքում իրենց փոքրիկ տղայի համար աղջիկ ուզելու առթիվ նշանվող տղայի հոր և ծերունի պապի միջև ծագում է խոսակցություն։ Ահա այդ մասին նույն գյուղի թղթակից Վարազդատ Թովմասյանը գրում է. «Ծերունի հայրն ասում է տղին. «Տո, հողն եշ, սխալս գլխիդ. տո, դու քոռ ես, չՔս տեսնում, որ մենք հարուստ տուն ենք. ես տարի մեջանից 5 ռուբլի ջրբայլին տուգանք առան, 15 ռուբլի յել գոմեշ գողանալու համար առան. դեհ, որ մենք ասեմ, որ մենք թաղնեմ ե։ Դիլոնց աղջը քյոմագով է. նրանց Արտուշը գյուղխորհրդի նախագահ է, Սարգիսը գործկոմի քարտուղար, ալանք որ մեր քամակն անցան՝ բոլ ա ելի»։

Ահա այլանդակ հասկացողություն և մտայնություն, որոնք ժառանգություն են մնացել հին, ցարական, դաշնակցական կառավարությունների թալֆայաբաղ, կուլակապաշտ քաղաքականությունից։

Բավական տարածված և շատ սովորական յերևույթ է աղջիկ փախցնելը։ Մեր գյուղերում դեռ հերոսություն, իգիթություն է համարվում աղջիկ փախցնելը։

Այս յերևույթն ու սովորությունը հին կենցաղի ամենաայլանդակ և կեղտոտ մնացորդներից է, որի դեմ մեր պայքարը պետք է լինի անողոք։

ԿՆՈՒՆՔ ՕՎ ԹՈՂՈՒՄ

Գյուղում թե կնունքը և թե թաղումը կատարում են մեծ մասամբ հին ձևերով ու ծիսակատարություններով։ Քիլիխը դեռ գոյություն ունի։ Բավական մոլեռանդ կերպով շարունակվում է կնունք-մկրտությունը։ Կուլակային ունևոր տարրերը բավական ճոխ և բազմամարդ կերուխումով են կատարում իրենց նորածինների կնունքը։ Մկրտում են յեկեկեցում և խնդրում քահանային, որքան կարելի յե շատ մեռոն քսի յերեխայի մարմնին, մանավանդ ճակատին, որպեսզի յերեխան «ծույլ» և «ավանակ» դուրս չգա։ Զբավորները նույնպես, թեև չեն կարողանում ճոխ կերուխումով կատարել իրենց յերեխաների մկրտությունը, բայց ելի մի «թեթև» քեֆ սարքում են։ Միջակը, չբավորը թաղման կամ կնունքի ժամանակ մորթում է իր մի հատիկ անասունը, անկամ լծկան յեզը, սեղանի վրա դնում ընտանիքի վերջին պատառ հացը և այլն։ Գյուղացին, դժբախտաբար, մի քիլիխով դեռ վերջացած չի համարում իր պարտքը «հանդիսավոր կյանքի քաղցածներին»։

Ահա կենցաղ, սովորություն, որոնք սդզում են նոր կենցաղի բնդմնավորմանը, որոնք այնուհետև բավականին զգալի խոչընդոտ են լինելու, կուլտուրական հեղափոխության ճակատում տարվելիք պայքարի ընթացքում, մեր բոլոր աշխատանքների գործին։

Գյուղի հին կենցաղի մեջ ամենասոսկալին և արմատականը կրոնամոլությունն է և նրա ազդեցությունը։

Մեր գյուղական ազգաբնակության համարյա 40—50 տոկոսը բավական մեծ ակնածությամբ ու ջերմեռանդությամբ դեռ հետևում և կատարում է կրոնական վողջ ծեսերն իրենց մանրամասն ձևականություններով և առանց բացառության տոնում բոլոր տոները։

Զրոյականքին վոչ միայն կուլակները, ունևորները ու հավատացյալները են մասնակցում, այլ մասամբ բատրակներից, չքավորներից և կոլեկտիվականներից։ Անցյալ տարվա ջրոյականքին վերոհիշյալներից վոչ միայն լոկ մասնակցել են, այլև մի գյուղում մի բատրակ 8 ռուբլի յե տվել, խաչը ջրից հանելու Իսկ այս տարի քանաքեռցի չքավոր Ավետիս Նազարյանը, ինքն էլ չքավորական խմբակի անդամ, խաչը ջրից հանել է և ամբողջ մի շաբաթ տանը կեբուխում սարքել, կուլակներին կերակրել։

Իսկ այդ «խաչհոգայր» բատրակը չի բավականացել 8 ռուբլի տերտերի գրպանը գցելով։ Խաչը տանելով իր տուն՝ խաչի գլխին կերուխում էլ է սարքել։

Ահա այս ամենը գալիս են ասելու, վոր մեր բատրակների և կոմյերիտականների մեջ վոչ միայն հակակրոնական ագիտացիան, այլև կուսդաստիարակչական աշխատանքները թույլ են տարվել։

Պետք է ուժեղացնել հակակրոնական պրոպագանդան, կազմակերպել անաստվածների նոր խմբակներ և յեղածներն էլ ուժեղացնել, աշխատանքի կոչել։

Բավական խոր արմատներ ունի նաև սնոտիապաշտությունը, վորը վերացնելու, արմատախիլ անելու համար մինչև այժմ շատ քիչ աշխատանք է տարվել։

Հին «զորավոր» վանքերը, «սրբերը», խաչքարերը և այլն և այլն, գյուղական հավատացյալ, սնոտիապաշտ և նախապաշարված խավերի համար դեռևս շարունակում են մնալ վորպես կուռքեր, ֆետիշներ և մարմնավորված հերոսներ, գերբնական ուժեր, վորոնց գործը շարունակ հրաշագործություններն են, և վորոնք «ամենակարողն» են ամեն ինչ անելու։ Ցուրաքանչյուր տարի Հայաստանի սերբ-տորիայի վրա գտնվող ուխտատեղիներում հազարավոր կենդանիներ են մորթում, «մատաղ անում» ի փառս հավատացյալների և ի սատմոքսն քահանաների...

1927 թվի դեկտեմբերի 8-ի լուսնի խավարումը խոշոր իրարանցում առաջ բերեց գյուղերում, և սկսեցին զանազան յենթադրություններ անել։ Հենց այդ պատճառով էլ «Մաճկալ»-ի գյուղթղթակիցներից շատ-շատերն այդ մասին գրեցին «Մաճկալ»-ին և խնդրեցին բացատրություն, վորովհետև գյուղացիությունը մոլորության մեջ է և լուսնի խավարումը կապում է նոր գալիք պատերազմների, հիվանդությունների, սովի հետ և վերագրում ինչ-վոր գերբնական ուժի։ Ահա այդ մասին գրած թղթակցություններից մեկը։

Շամշադինի Նորաշեն գյուղից Գրիգոր Ավագյանը գրում է.—«Հարց... դեկտեմբերի 8-ին, յերեկոյան ժամը 10-ին մեր գյուղում տեղի ունեցավ մի հրաշք. գիշերվա ժամը 9-ին լուսնի գույնը փոխվեց, դարձավ սև,

ՀՍԽՀ—ՍՍՀՄ
Գր. Ամբ. Գրադարան
ՀՍՍՀ—ՍՍՀՄ
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
4183
39

մի քանի բոպեյից հետո լուսինն ատացավ իր սեփական լույսը։ Դրա վրա գյուղացիությունն անհանգստություն է ստացել։ Ասում են, վոր շուտով կռիվ է լինելու։ Գյուղի կուլտուրական ուժերը չեն կարողանում պատասխան տալ։ Խնդրում եմ շուտ պատասխան տաք»։ Զնայած վոր վորոշ չափով չափազանցություն է, բայց և այնպես փաստը մնում է փաստ, վոր գյուղում սնոտիապաշտության, նախապաշարումների և բնական զանազան չերևույթների առթիվ, նրանց շուրջը չեն կազմակերպել բնագիտական մատչելի զրույցներ։ Դրա համար էլ այսոր վոչ միայն գյուղացին, այլև թերթի թղթակիցը, շատ թե քիչ գյուղի գիտակից տարրերից՝ չգիտեն, թե ինչի հետևանք է լուսնի կամ արևի խավարումը։

Մեր գյուղերում շարունակում են դեռ գոյություն ունենալ զանազան գրբացներ, բախտագուշակներ, թալիսման անողներ և այլն, վորոնք շարունակում են խավարի մեջ պահել գյուղացու միտքն ու գիտակցությունը և ապրել նրանցից կորզած փողերով։

Դժբախտությունն այն է, վոր ֆալչի-գրբացներին հավատում են նաև գյուղում աշխատող վարժուհիներից, ուսուցիչներից և խորհրդային ու այլ հաստատություններում աշխատողներից վոմանք։

Այս չերևույթները նույնպես խոշոր խոչընդոտներ են գյուղում տարվելիք մեր կուլտուրական պայքարի ասպարիզում։

ՍՐԻԿԱՍՈՒԹՅՈՒՆ

Սրիկայության կամ խուլիգանության դեմ մեզ մոտ՝ Հայաստանում, շատ քիչ պայքար է տարվել։

Թերևս լոկ այն պատճառով, վոր կարծել է ինքներս մեզ համոզել ենք, թե մեզ մոտ սրիկաներ չկան, կամ եթե կան էլ՝ քիչ են ու չարժե դրանց մասին մտածել։ Դա սխալ է, իհարկե։

Ցարական ռեժիմի և դաշնակցական քաղաքականության ներքո պատրաստված, նրանց ավազանում մկրտված, նրանց դաստիարակած անբախտ և լոպպազ սրիկաներից դեռ շատ քչերն են ուղղվել և յենթարկվել խորհրդային օրինապահության, նրա պրինցիպներին։

Այդ սրիկաները շարունակ թափառում են քաղաքի փողոցները, շուկան, մոտենում սրան-նրան, չնչին բանի համար վիճաբանում, հաճախ էլ զանակներ հանդես բերում և վիրավորում սրան-նրան։

Հայհոյանքն, անտեղի կնբպով մեկի վրա հարձակվելն ու ծեծելը, նախալ ձևով կնոջ հետ ծանոթանալը, զենքի սպառնալիքի տակ բռնաբարությունն կատարելը, թատրոններում, կինոներում և նման հասարակական տեղերում աղմկելը, ցինիկ արտահայտություններ ու բացականչություններ թույլ տալը՝ այս բոլորը հին ռեժիմի խուլիգանական դաստիարակության հետևանքներն ու մնացորդներն են, վորոնց դեմ մեր պայքարը պետք է լինի շեշտակի և անողոք։

Գյուղի սրիկաներն էլ ունեն իրենց «աշխատանքի» ձևերը։ Նրանք հացահատիկների, խոտերի դեզեր են վառում, մարագներ ու տներ են հրդեհում։ Բացի դրանից, գիշերները գնում են այս կամ այն այրի կնոջ տան վրա և այլն և այլն։

Մթթե այս արարքները սրիկայություններ չեն և արանց հեղինակները սրիկաներ։ Մթթե սա հին կենցաղ չե և ամենաայլանդակ ժառանգություն՝ նախկին

կարգերից մնացած, վորի դեմ կռվելու համար խոշոր դեր ու պարտականություններ ունեն կատարելու կոմսոմոլը, մեր վարչական մարմինները, առավել ևս մեր կարմիր միլիցիան։

Այդ տիպի սրիկաներին շատ ժամանակ իրենց գայքարի համար ոգտագործում են կուլակները։

ՀԱՐԲԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ

Հին կենցաղի մնջ գլխավոր և «պատվավոր» տարադիցիաներից է հարբեցողությունը կամ կոնծաբանությունը։ Մի շարք գյուղերում կան հայտնի խմողներից կազմված շայկաներ, վորոնք բացի հարսանիքներում, այլև այս կամ այն հավաքույթներում խմելուց, հարբելուց՝ գյուղում ունեն վորոշ մարդիկ, վորոնց մոտ այդ «սպեց» կոնծողները շարունակաբար հավաքվում և հարբում են։

Դժբախտաբար, յերբեմն այդ խմողների խմբերի մնջ մեկ-մեկ ել ընկնում են թե կուսակցականներ, կոմյերիտականներ և թե գյուղում աշխատող այլ ընկերներ, մասնավորապես գյուղխորհրդի նախագահներից։ Հարբեցողության հետևանքն այն է լինում, վոր ծագում են բավական անախորժ սկանդալներ, ծեծ և բռնաբարություններ։

Ցավոք սրտի պետք է ասել, վոր այս արատի, այս յերևույթի դեմ կռվելու ասպարիզում նույնպես վոչինչ չի արվել գյուղի կուս. և կոմյերիտ կազմակերպությունների կողմից։ Այո, արատ, վարակիչ հիվանդություն ու դնֆեկտ, վորը նույնպես խոշոր խոչընդոտ է հանդիսացել և պիտի հանդիսանա մեր կուլտուրական աշխատանքների ճանապարհին։

ԹՂԹԱԽՄԱՂ

Հայաստանի համարյա բոլոր գավառներում տարածված է թղթախաղը և զումարբազությունը, վորոնք նույնպես քիչ պախարակելի, այլանդակ ու հիվանդագին յերևույթներ չեն։ Յերևույթներ, վորոնք իրենց ուրույն տեղն են գրավում հին կենցաղի բնագավառում և առաջ են բերում բավական ֆնասակար, քայքայիչ հետևանքներ գյուղական յերիտասարդ սերնդի կյանքում և խոչընդոտ հանդիսանում գյուղում տարվելիք մեր բոլոր աշխատանքներին։ Գյուղերում կան զումարբազների խմբեր, հավաքույթի հատուկ տեղերով, վորոնք շարունակ զբաղվում են այդ «յերանելի» արհեստով և թալանում այն խեղճ ու կրակ մարդկանց, վորոնք պատահմամբ առաջին անգամ ընկել են նրանց թակարդը։

«Մանկալ»-ի թղթակիցների գրելուց յերևում է, վոր շատ չքավորներ, գյուղխորհրդի անդամներ և մյուս հիմնարկներում աշխատող անձնավորություններից նույնպես՝ «հյուրընկալվում» են այդ «վատակալից» տեղերում և թալանվում վոտից գլուխ։ Ցավալին այն է, վոր դրանցից շատերն իրենց տան յեղած-չեղածը ծախում և թղթախաղում են դնում։

Պետք է ասել, վոր գյուղի թղթամոլ զումարբազների մեծ մասը հենց գյուղի սրիկաներն ու հարբեցողներն են։

Այս ախտի դեմ պայքար մինչև այսոր վոչ մեր մամուլն է տարել, վոչ ել գյուղում գոյություն ունեցող համապատասխան մարմինները։

ՆԻՈՅՈՒԿՈՑ

Մեր գյուղացիների նիստուկացը, սովորությունները 70 տոկոսով դեռ հին են, նահապետականը։ Նոր կենցաղն իր պայքարի ուղիների վրա, հանձին հին կենցաղի գերակշռող մնացորդների՝ հանդիպում է հրակալական խոչընդոտների։

Խոսենք փաստերով և օրինակներով։ Մեր գյուղացին տարրական մաքրության, մաքուր հագնելու, մարմինը մաքուր պահելու, մաքուր ուտելու և խմելու մասին դեռ քիչ գաղափար ունի, իսկ եթե վորոշ չափով էլ ունի և կարող կլինի, թերևս, մաքուր, քիչ տանելի, բարեկեցիկ կյանք վարել, նա չի անում այդ, վորովհետև մի տեսակ ծուլանում է, ինչպես իրենք են ասում՝ «ալարում» է, կարծես թե նոր կենցաղով ապրելը նրա համար սրբապղծություն է և դեմ ու հակառակ իր հանգուցյալ պապերին ու նախնիքներին։

Մեր գյուղերում դեռ շարունակում են 15—20 հոգով ապրել մի սենյակում, մի դարա դամում (սև տուն), իսկ շատ շատերն ապրում են ոդաներում, անասունների հետ միասին, մի հարկի տակ։

Գյուղացիք լավ սննդի, համով, հոտով և սննդաբար կերակուրների մասին չեն մտածում։ Ինչ վոր պատահում է, ինչպես վոր կարողանում են, այնպես էլ եփում, ուտում են։ Գյուղացին սննդի, կերակրների համար միշտ էլ ամբարած ունենում է բավական առատ, բազմազան համեմներ և կենսանյութեր, բայց դժբախտաբար այդ բոլորը զուր փչանում են։ Ինչպես իրենք, գյուղացիներն են ասում, «ամեն ինչ կրակի վրա խըշփըշտորում ենք, ուտում»։

Հայաստանի բոլոր գավառներն ու գավառակները համարյա թե ունեն իրարից տարբեր տարազ—հագուստի հատուկ ձև, և սոսկալի չեն մի շարք տարազներ։ Որինակ, Ղարաբաղի, Զանգեզուրի և Դարալագյազի կանանց տարազը, նրանց հագուստը վոչ այլ ինչ է, եթե վոչ զանազան փալասների, կտավների, գործվածքների ու դրամների խառն կույտեր, վորոնց մեջ, վորոնց տակ քրտնաթոր տնքում են վոչ միայն պառավները, այլև ջահել հարսները։ Պետք է ասել, վոր ամիսներով այդ փալասները մնում են անլվա, կպած նրանց մարմնին և միջատների առատ աղբյուր ծառայում։ Նախանձելի չե և տղամարդկանց հագուստը։ Տղամարդիկ, գլխավորապես ծերերն ու տարիքավորները, համարյա թե ճերմակ կտորներից շապիկ չեն հագնում. հագնում են զունավոր չթերից կարած շապիկներ, իսկ վրայից՝ ինչից վոր պատահի։ Եթե պատահում է, վոր կտավից, բյազից շապիկ են հագնում, անպայման պետք է կապույտ գույնով ներկեն։

Շարունակ կեղտոտ և գարշահոտ վիճակում են լինում նրանց բրդե չուխաները և վոտքերի տրեխներն իրենց «չնաշխարհիկ» գուլպաներով։ Լվացքը շատ ուշուշ են անում, այն էլ հաճախ առանց սապոնի և յեռայրած ջրի։ Գյուղի չքավոր մասն իր լվացքն անում է սառը ջրում, գետերում, առուներում և հագնում առանց հարթուկելու։ Միանգամայն հակառողջապահական են նաև տղամարդկանց մորթի-մոթալ փափախները, վորոնք տարվա ջորս լեղանակներին մնում են անփոփոխ և բարեհաճում են տիրոջ գլխից իջնել միայն յեկեղեցում ջրորհնեքին և զատկին։

Ուրեմն ասպիսով տեսնում ենք, վոր յեվրոպա-

կան տարազը դեռ շատ քիչ քանակով է մուտք գործել գյուղ։ Այդ քիչն էլ իրենց հետ տարել են քաղաքում տպրած, աշխատած անհատներ, վորոնք վերադառնալով գյուղ՝ միքանի տարի հագել են այդ հագուստը, մաշել և մնալով գյուղում՝ ստեղված նորից վերադարձել իրենց պապերի «իներ ու բարաքյաթով լի» տարազին։

Գյուղական մեր կուս. և կոմսոմոլիստ ընկերներից շատերը դեռ հագնում են չուխա, ներկած շապիկ, տրեխներ, ծածկում են մոթալ փափախ և այլն և այլն։ Մինչդեռ դրանք, վոր գյուղում հին կենցաղի դեմ կռվողներ են հանդիսանում, վոչ թե կռվել են հին տարազի գործածության դեմ, այլ իրենք էլ են կրել այդ տարազը, դժբախտաբար դեռ շարունակում են կրել։

Հին տարազի գոյությունը կենցաղային կարևոր խնդիրներից է հանդիսանում, և նրա վերացումը կլինի նույնպես կուլտուրական հաղթանակ կուլտուրական հեղափոխության ճակատում։

Զադրայի դեմ սկսած պայքարից հետո միևնույն ժամանակ այդ պայքարը պետք է ուղղված լինի նաև փափախի, քիթկալի, քորդանդի (յերևսի շոր) և յերեք փեշանի հագուստների դեմ։

ՆՈՐ ԿԵՆՑՈՂԻ ԾԻԼԵՐԸ

Հոկտեմբերյան և Նոյեմբերյան հեղափոխությունները, մեր կուսակցության և կառավարության այս 10 տարվա համառ ու յեռանդուն աշխատանքները չեն անցել ապարդյուն։ Մեր լարված աշխատանքն աշխատանքի բոլոր ասպարեզներում, մասնավորապես գյուղական կյանքում, տվել են իրենց շոշափելի արդյունքները։ 10 տարվա ընթացքում յերթե վոչ ամբողջովին, այլ կիսով չափ վերացնել այդ կենցաղը՝ դա անհնարին կլիներ և վեր ամեն տեսակի հնարավորություններից, վորովհետև այդ կենցաղը հազարավոր տարիների կենցաղ է, վորը գյուղացիների համար դարձել է քարացած տրադիցիա, դժվար խորտակելի կուռք և այսորվա մեր պայքարից՝ ուղղած նրա դեմ, գյուղացին խրտնում, խորթ աչքով է նայում և ափսոսում, վոր վիրանում, անհետանում են իր պապերի «ինեանելի» սովորությունները ու տրադիցիաները։ Ահա սրա համար էլ բավական դժվար, միանգամայն դժվարին է յեղել մեր պայքարը գյուղում, ուղղված հին կենցաղի դեմ, և մենք պայքարի մշակված մեթոդներ չենք ունեցել։ Վոր ղլխավորն է, խորհրդային իշխանությունը և նրա դեկավար կոմկուսակցությունը մինչև այս վերջին 4-5 տարին հաղիվ զբաղված են յեղել մեր յերկրի քաղաքական, տնտեսական, շինարարական և այլ աշխատանքներով։ Իհարկե, դրանք էլ կուլտուրական աշխատանքներ են, վոր վոչվոք չի կարող ժխտել։ Ցեվ այսորվ, յերբ մեր տարած աշխատանքների բոլոր ասպարեզներում հասել ենք վորոշ նպատակի, հասել նախապատերազմյան շրջանին, դեռ միքանի բնագավառներում անցել այդ շրջանից, մեր կուսակցությունը, խորհրդային իշխանությունը իր աշխատանքի, իր պայքարի բահն ու բրիչն ուղղում է դեպի մի այլ ֆրոնտ, վորը պակաս չափով կարևոր ու նշանակալից չէ մեզ համար. դա կուլտուրական հեղափոխությունն է, վորի պահանջն այժմեական է և հրատապ։ Մեր աշխատավոր մասսաները, մասնավորապես գյուղական, իրենց քաղաքական, տնտեսական, շինարա-

բաղան և այլ փրոնտներն ապահովելու հետ միասին՝ այսոր նրանք ծարավի չեն կուլտուրական հեղափոխության։ Հին կենցաղը, հին գիրքը, հին արվեստն այլևս չեն բավարարում ու շարժում մեր նոր աճող սերընդի հուզական աշխարհը, վորն այսոր ուզում է թաղել հին կենցաղը և նրա գերեզմանի վրա ստեղծել, կառուցել նոր կենցաղ, նոր կյանք և սոցպիսով գյուղը դնել սոցիալիզմի ճանապարհի վրա։

Այսոր այդ նոր սերնդի միտքը, ստեղծագործական թափը շարժվել է ուղից և ցանկանում է ստեղծագործել, շինել, կառուցել իր սեփական կուլտուրան, իր իսկ արվեստը և ապրել ու շնչել նրանով։

Ահա այս կարևոր, այս չափազանց եական խընդիրների ու յերևույթների վրա պիտի լուրջ ուշադրություն դարձնենք, և մի շարք համապատասխան մարմիններ ժամանակին, առանց ուշացնելու պետք է ուժեղացնեն կուլտուրական հեղափոխության ճակատում տարվելիք պայքարի պատրաստությունները, սրեն նրա զենքերը և մարզեն այդ ճակատում կռվող մարտիկներին։

Պետք է ասել ու շեշտել, վոր նոր կենցաղի ծիլերն արդեն յերևում են, և հին կենցաղը խոշոր ճեղքվածք է ստացել։ Այսոր թե քաղաքում և թե գյուղում մենք տեսնում ենք ծաղով, խալաթով, յեկեղեցով պսակների, հարսանիքների կողքին կարմիր հարսանիքներ։ Չնայած վոր այդ հարսանիքներն իրենց բնույթով, եյությամբ նոր են և թերություններ ունեն դեռ, բայց նրանք մերն են, մեր ցանկացածը, մեր աշխատանքի ծիլերը, մեր համառ պայքարի ծաղիկները։ Բացի դրանից, մենք տեսնում ենք կարմիր թաղումներ, կնունքներ, հակահրեշտակաց տոնակատարություններ, անհավատների խմբակների կազմակերպում, յեկեղեցիներն ակումբների վերածելը և այլն և այլն։

Ահա նոր կենցաղի ծիլերը, նրանց աճումը և նոր կենցաղի հաղթանակի գրավականը։

ԳՅՈՒՂԱՅԻՐԿՈՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԵՐՄԻՐ ԲՈՆԵԿԸ

Գյուղում հին կենցաղի դեմ կռվելու, կոմունիստական դաստիարակություն մտցնելու, գյուղը հիմնավին դարձնելու խորհրդային գյուղ՝ ահա դա լինելու է կուլտուրական հեղափոխությունը գյուղում և այդ հեղափոխության համար մղվելիք լուրջ ու համառ պայքարի կարմիր բանակին զինվորագրվելու ամենաառաջին պարտականությունն ընկնում է գյուղում աշխատող կոմունիստ և կոմյերիա ընկերների վրա, և նրանք պետք է լինեն այդ լուրջ պայքարի ավանգարդը, նրա դրոշակակիրը։ Ապա սրանց թիկունքում պետք է վրստահ, աննկուն կերպով կանգնած լինեն գյուղքաղաքացիները, բատրակները, չքավորները և անկուսակցական յերիտասարդությունը և այն անհատ կուլտուրական ուժերը, վորոնք դեմ են հին կենցաղին և ուզում են, վոր հաղթանակի նոր կենցաղը։

Մեր կուսակցության բարձր որգաններն անհրաժեշտ ղեկավարությունը պիտի ուժեղացնեն և այժմյանից գրավեն կուլտուրական հեղափոխության դիրքերը։

ԻՆՉՊԵՍ ԿՌՎԵԼ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՆԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՀԱՆՈՒՆ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ

Գյուղում կուլտուրական հեղափոխություն կատարելու համար նախ և առաջ պետք է կռվել այն անկուլտուրականության, հետամնացության անգրագիտության դեմ, որ գոյություն ունի գյուղում և ներկայումս էլ համառ կերպով խոչընդոտ է հանդիսանում մեր սոցիալիստական, տնտեսական, կուլտուր-կրթական և այլ շինարարական աշխատանքների բնագավառում։ Իսկ անկուլտուրականության ու հետամնացության դեմ կռվելու, վերացնելու համար նախ և առաջ, առաջին հերթին պետք է կրակն ուղղել անգրագիտության դեմ, պայքարը տեղափոխել այդ կարևորագույն ֆրոնտը։ 1926 թ., Խ. Միության կենտվիճակագրության տվյալների համաձայն, Խ. Հայաստանում ազգաբնակության թիվը կազմում էր 658.360 հոգի, որից անգրագետները կազմում էին 75 տոկոս։

Այնպես որ մինչև որ զգալի չափով չկարողանանք վերացնել անգրագիտությունը, ապա լերբեք չենք կարող կռվել հին կենցաղի, հետամնացության ու անկուլտուրականության դեմ և գյուղում կատարել կուլտուրական հեղափոխություն։ Հեղափոխություն,

որն ուժեղ թափով նպաստելու է գյուղի մեքենայացմանը, կոոպերացմանը, կոլեկտիվ տնտեսությունների զարգացմանը և, վերջապես, գյուղի ինդուստրացմանը։

Իհարկե, այս պայքարում այս աշխատանքներն իր հաղթանակին հասցնելու համար խոշոր դժվարություններ կան մեր կուսակցության և աշխատավոր մասսաների առաջ։ Յեվ որպեսզի դժվարությունները նվազեն, խոչընդոտներն արագ կերպով հաղթահարվեն, ուստի պետք է հրատապ և լուրջ կերպով մտածել գյուղում աշխատող կադրերի պատրաստման և վերապատրաստման մասին, որոնք պետք է հանդիսանան կուլտուրական հեղափոխության անձնվեր մարտիկները, հին գյուղի վերացման և նորի ստեղծման հմուտ ճարտարապետները, նրա բահն ու բրիչը։

Ամենից առաջ անգրագիտության, հին կենցաղի վերացման, կուլտուրական հեղափոխության, կուլտուրշավի և նոր կենցաղ, նոր գյուղ ստեղծելու համար տարվող պայքարի ամենաառաջին մարտիկներն—ավանգարդը՝ պետք է հանդիսանան գյուղական կոմսերիտականները, պիոներները, պատժողները, ուսուցիչները և մի շարք հասարակական կազմակերպություններ ու որդաններ, որոնց մասին մենք իր տեղում կխոսենք։

Պայքարը, կրակը գյուղում ամենից առաջ պետք է ուղղել այն կոմունիստների, կոմսերիտականների, պատգամավորուհիների, բատրակների, չքավորների, կոլխոզնիկների և այս կամ այն հիմնարկում աշխատող անձանց դեմ, որոնք դեռ չեն թողել հին, պապենական, Աբովյանի և Պռոշյանի եպոխայի կենցաղը և այսոր չեն ապրում նոր կենցաղով, Հոկտեմբերի բերած սավորություններով ու բարիքներով։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՅԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԽՐՃԻԹ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆՆԵՐԻ ՆԵՐԻ ԸՆԿԼԻՔՆԵՐԸ

Անդրագիտության վերացման, հին կենցաղի դեմ կռվելու և կուլտուրական հեղափոխություն կատարելու գործում, գլխավորապես գյուղում խոշոր և անհետաձգելի գործ ու անելիքներ ունի կատարելու խրճիթ-ընթերցարանը։ Խրճիթ-ընթերցարանը գյուղում վոչ այլ ինչ է, եթե վոչ մի կուլտուրական ոջախ, լուսավորություն տարածող մի վայր, վորից պետք է իրենց քաղաքական, գիտական, կրթական և գեղարվեստական հոգևոր սնունդ ստանան գյուղի հոծ մասսաները։

Խրճիթ-ընթերցարանները պետք է կանգնեն իրենց կոչման բարձրության վրա և իրոք վոր դառնան մեր սոցիալիստական շինարարության, կուլտուրական հեղափոխության և դասակարգային պայքարի գինանոցները գյուղում։

Մինչև այսոր էլ մեր խրճիթների, եթե չասենք 80 տոկոսը, գոնե 60—55 տոկոսը կանգնած չեն իրենց կոչման բարձրության վրա։ Նրանք որերով, շաբաթներով փակված են լեղել։ Նրանց վարիչներն էլ իրենց քեֆին, ինչ ուզել են, այնպես արել են։ Կան խրճիթներ, վորոնք քաղաքական գրականությունից զուրկ են։ Իսկ կան այնպիսիները, վորոնց լեղած գրքերն էլ գտնվում են սրա-նրա մոտ և լերբեք չեն բարեհաճում վերադարձնել խրճիթ։ Կան, գոյություն ունեն նաև այնպիսի խրճիթներ, վորոնք գրքեր բոլորովին չունեն, բավական քիչ թերթեր են ստանում, չունեն վոչ մի անկյուն, պատի թերթ լույս չեն ընծայում, յեթե լույս էլ ընծայում են, այն էլ տարեկան 2-3 անգամ, այն էլ

տոն արթը և այլն և այլն։ Այս լերևույթը բավական խոշոր բաց և դատապարտելի թերություն է, վորի դեմ պետք է պայքարել և գործի գլուխ դնել ձեռնհաս, հմուտ և գործունյա ընկերների։ Կան խրճիթ-ընթերցարաններ, վորոնք ծառայում են զուտ վորպես նարդիխանաներ, դոմինոյի և այլ խաղալիքների վայրեր, մանավանդ՝ վորպես հեքյաթ պատմելու վայրեր, ուր ծերունիները մեր յերիտասարդությանն աշխատանքից կտրելով, գլխավորապես բավական թվով կոմունիստների և կոմյերիտականների՝ գլխներին հավաքած՝ առավոտից մինչև յերեկո հեքյաթներ են պատմում այս կամ այն դևի, վիշապի կամ թագավորի մասին։ Ցավ դժբախտաբար, այս բոլորի մասին գիտեն տվյալ շրջանի սոցկուլտ-բաժվարները, սակայն վոչ մի միջոց ձեռք չեն առնում այդ բացերը վերացնելու։ Ընդհակառակը, կան շրջանային սոցկուլտ-բաժվարներ, վորոնք միայն և միայն զբաղված են ներկայացումներ կազմակերպելով և աշխատավորությանը, մեր մատաղ սերնդին կերակրելով խալտուրային պիեսներով։ Այդ ընկերները լայաղ չեն անում կենտրոնից շարժվելու, շրջելու գյուղերը և ուսումնասիրելու քաղլուսաշխատանքները։ Աշխատանքներ, վորոնք իրենց անմիջական աշխատանքների ուղն ու ծուծն են կազմում։

Թվածս բոլոր բացերը վերացնելու և խրճիթ-ընթերցարանները, բառիս լայն իմաստով, իրենց կոչման բարձրության վրա գնելու համար պետք է խրճիթվարները լինեն հմուտ, քաղաքականապես պատրաստված և յեռանդուն։ Գլխաբաղուսավ արչության տեսուչները պետք է լուրջ ուշադրություն դարձնեն քաղլուսաշխատանքների վրա և, վոր գլխավորն է, գլխաքաղ-

լուսավարչությունն էլ պետք է ուժեղացնի իր անմիջական հսկողությունը և անցնի գործնական, արդյունավետ ձևերի ու միջոցների և խրճիթների անելիքները, նրանց վրա դրված հեղափոխական պարտականություններն իր կոչման բարձրության վրա դնի ու այդպիսով խրճիթ-ընթերցարանները դարձնի գյուղի կուլտուրական, քաղաքական և ռազմական կյանքի շտաբներն ու վորբանները։

Խրճիթ-ընթերցարանի միջոցով է, վոր մեր կոլխոզները, կոլխոզնիկ աշխատավոր գյուղացին պետք է ծանոթանան, սովորեն իրենց տնտեսությունը, հողը, այգին և այլն և այլն նոր տեխնիկայի, գիտության խոսքով ու խորհրդով մշակելու ձևերի հետ։ Խրճիթ-ընթերցարաններն են, վոր խթան են հանդիսանալու գյուղական աշխատավորությանը լծելու և մասնակից դարձնելու մեր սոցիալիստական և կուլտուրական շինարարությանը։ Այնպես վոր չափազանց խոշոր են խրճիթ-ընթերցարանների դերն ու անելիքները հին գյուղը քանդելու և նորը՝ կոլխոզայինը կառուցելու դժվարին, բայց վսեմ գործում։

ՍՊԱՌԱԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՑՆԵ. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆԸ

Սպառակոոպերացիան և աշխատավոր գյուղացիության լրիվ, 100 տոկոսով կոոպերացումը—դա վոչ այլ ինչ և, լեթե վոչ կուլտուրական հեղափոխություն։

Սպառակոոպերացիայի վրա չպետք է նայել, վորպես լոկ առևտրական, ծախող, սպառող օրգանների ու գործոնների վրա։

Սպառակոոպը գյուղում շատ ու շատ անելիքներ ունի։ Մենք գիտենք, մենք տեսնում ենք, վոր այսոր

Հայկոոպը, գյուղի կոոպերատիվը՝ մանուֆակտուրայի, նավթի, սապոնի, շաքարի և այլևայլ կենսական մթերքների հետ միատեղ գյուղ է տանում և կուլտուրական պարագաներ, գործիքներ, գրականություն և այլն, և այլն։ Որինակի համար՝ ռադիո-ապարատ, շրջիկ կինո և յերաժշտական ամեն տեսակի գործիքներ։ Այսոր ամբողջ Խ. Հայաստանի ռադիոֆիկացիան կատարում է Հայկոոպը։ Նա յի նույնպես, վոր իր շրջիկ կինոներով հնարավորության սահմաններում բավարարում է մեր գյուղացիության կինո-պահանջը։

Ներկայումս «գիրքը մասսաներին», գիրքը գյուղ հասցնելու՝ այդ խոշոր կուլտուրական գործն ու աշխատանքները կատարում է նույնպես Հայկոոպը։

Անցած 1930 թվականին Հայկոոպն եր, վոր մի շարք կոլեկտիվ տնտեսություններում կազմակերպեց մանկապարտեզներ, մանկական հրապարակներ և այդպիսով աշխատավոր գեղջկուհուն հնարավորություն տվեց ազատ կերպով զբաղվելու թե կոլեկտիվի և թե իր տնտեսական ու տնային աշխատանքներով։

Բացի այս բոլորից, սպառակոոպը քաղաքից գյուղ է տանում զանազան տեսակի հագուստներ, սապոն, կոշիկ, կրկնակոշիկ և այլ իրեր ու այդպիսով աշխատավոր գյուղացուն ազատում է մանավորի—չարչիների ճանկերից, կռվում է հին կենցաղի դեմ և ստեղծում նոր ու գեղեցիկ կենցաղ։ Ահա այս բոլորը վոչ այլ ինչ են, լեթե վոչ կուլտուրական հեղափոխության հզոր զենքերը, վորոնցով մենք պայքարելու յենք հին կենցաղի դեմ՝ հոգուստ նորի, հոգուստ կուլտուրական հեղափոխության։

Դեռ շատ վաղուց, յերբ ընկեր Լենինը խոսել է սպառակոոպերացիայի դերի ու նշանակության մասին,

ասել է հետևյալը՝—«Եթե կոոպերացումը լրիվ ու կատարյալ լիներ, մենք արդեն յերկու վոտքով սոցիալիստական հողի (հիմքի) վրա կանգնած կլինեյինք։ Բայց գյուղացիության այդպիսի կատարյալ կոոպերացումը անհնարին է գլուխ բերել առանց կուլտուրական մի ամբողջ հեղափոխություն կատարելու»։

Ցեվ իրոք, առանց կուլտուրական հեղափոխություն կատարելու՝ յերբեք հնարավոր չէ, վոչ միայն «լրիվ ու կատարյալ» կոոպերացում, այլ և անհնարին կլինի տնտեսական հեղափոխություն կատարել, գյուղին համատարած կոլեկտիվացում ստեղծել։

Ցեվ վորպես այդպիսին, Հայկոոպն ավելի քան պետք է լարի իր կուլտուրական ուժերը, սրի այն բոլոր զենքերը, վորոնք պետք են կուլտուրական հեղափոխության ֆրոնտի համար։

Այդ զենքերն են.

Մեր վողջ յերկրի լրիվ ռադիոֆիկացիան, կինոֆիկացիան, գրականության առաքումն ու գյուղը դրանով վողողելը, մանկապարտեզների, մանկական հրապարակների, անկյունների, մսուրների, բաղնիքների, հասարակական հացի փռերի, ավելի շուտ կոլխոզային փռերի, ճաշարանների, լվացքատների և այլնի բացումն ու կազմակերպումը։

Ահա այս բոլորը կատարելուց, այս ամենը ունենալուց հետո յե միայն, վոր մենք լրիվ կերպով գյուղում կատարած կլինենք կուլտուրական հեղափոխությունը։ Հեղափոխություն, վորը վերջ կտա այն բոլոր դժվարություններին, վորոնք խոչընդոտ են հանդիսացել և հանդիսանում են ներկայումս գյուղում տարվելիք թե կոոպերատիվ, թե կոլխոզային, թե տնտեսական, թե հասարակական և թե քաղաքական աշխատանքներին։

ԿՈԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՇՆԴՐԱՏՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆԸ

Գյուղի սոցիալիստական շինարարության, կուլտուրական հեղափոխության, գյուղատնտեսության վերակառուցման և, վերջապես, գյուղը սոցիալիզմի ճանապարհի վրա դնելու ամենահիմնական, ամենատարաջին նախապայմանը հանդիսանում են կոլեկտիվ տնտեսությունները, նրանց կազմակերպումը և ուժեղացումը։

Ահա, հենց այդ պատճառով է, վոր մեր կուսակցությունն իր ուշադրության ամենագլխավոր կետը դարձրել է դեպի կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպումն ու լայնացումը և կոլշինարարության ծավալման աշխատանքները։

Մեր կոլտնտեսությունների մեջ մտած են և մտնում են չքավոր գյուղացիներն ու բատրակները։ Մի բան, վոր մեր կուսակցության քաղաքականությունն է և դա բղխում է նրա եյությունից և սկզբունքներից։ Սակայն, դժբախտաբար, կոլեկտիվ տնտեսությունների անդամների համարյա 75 տոկոսն անգրագետ և կիսագրագետներ են։ Իսկ նման կոլտնտեսությունները կաճեն ու կդարգանան բավական դանդաղ կերպով և այդպիսիները լրիվ կերպով չեն կարող լինել սոցիալիզմի-կոմունիզմի առողջ բջիջները, չեն կարող ուժեղ թափով նպաստել գյուղի սոցիալիստական շինարարությանը, գյուղը դնել ինդուստրացման ճանապարհի վրա։ Դեռ 1920 թվին ընկ. Լենինը կոմսոմոլի 3-րդ համագումարում ասել է. «Անգրագետների յերկրում չի կարելի կոմունիստական հասարակակարգ ստեղծել...», դրա համար էլ այսոր ել ավելի, քան յերբևե, մեր կուսակցությունն իր ամբողջ ուշադրությունը, իր ուժերի մաքսիմումն ուղղել է դեպի կուլտուրական ֆրոնտը, դեպի անգրագիտության վերացման գործը։

Ուրեմն, վորպես այդպիսին, մեր լուսավորության, կուլտ-կրթական բարձր որգանները պետք է մտածեն և աշխատեն, վոր խոշոր համատարած կոլտնտեսություններին կից, ինչպես դա արվում է Ռուսաստանում, կազմակերպվեն լիկկայաններ, կուլտֆոնդերի միջոցներով, անգրագիտությունը վերացնելու համար։ Կոլտնտեսություններին կից կազմակերպված կամ կազմակերպվելիք լիկկայաններում կարող են սովորել նաև այն գյուղացիները, վորոնք վաղ թե ուշ մտնելու չեն և ցանկություն ունեն մտնելու կոլտնտեսությունների մեջ։ Եթե ուզում ենք ունենալ լավ, գիտակից և որինակելի կոլտնտեսություններ, ապա պետք է աշխատենք, վոր վոչ մի անգրագետ անդամ չլինի նրանց մեջ։

Հենց ինքը՝ կոլխոզշարժումը, կոլեկտիվ տնտեսության փաստն ու գոյությունը, վոչ այլ ինչ է, եթե վոչ կուլտուրական հեղափոխություն։

Կոլխոզշարժումը, համատարած կոլեկտիվիզացիան՝ դա տնտեսական խոշոր, մարդկային պատմության մեջ դեռ նմանը չեղած հեղափոխություն եր, վորը կատարվեց և շարունակվում է կատարվել մեր Միության բազմամիլիոն աշխատավոր գյուղացիության անհատական, մանր փոշրացած տնտեսությունների մեջ։ Հեղափոխություն, վորը վերջ է տալիս չութին, արորին և գործի չի դնում տրակտորը, կոմբայնը և գյուղատնտեսական այլ և այլ մեքենաներ։

Հենց տնտեսական այս խոշոր հեղափոխության— համատարած կոլեկտիվացման ճանապարհով, նրա միջոցով է, վոր կարելի կլինի կատարել մեր ուզած, մեր ցանկացած կուլտուրական հեղափոխությունը։

ՓՈԿԵՐԸ ՑԵՎ. ՆՐԱՆՑ ԱՆԵԼԻՔՆԵՐՆ ԸՆԴԻՐՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

Անգրագիտության վերացման հսկա գործում գյուղփոկերն էլ ունեն խոշոր անելիքներ։ Փոկերի գործն ու անելիքը հո մենակ նա չի, վոր նա հավաքի և բաժանի։ Վոչ. նա, փոկը պետք է իր միջոցներից ոգնության հասնի լիկկայաններում սովորող չքավորներին և բատրակներին գրենական և այլ պարագաներ մատակարարելով։ Փոկը և գյուղական այլևայլ որգանները, կազմակերպությունները, ուսուցիչը, բժիշկը և գյուղում աշխատող ինտելիգենտ ուժերը՝ բոլորը միասին ձեռք-ձեռքի տված պետք է լծվեն անգրագիտության, հին կենցաղի վերացման, կուլտուրական հեղափոխության և նոր կենցաղ, նոր՝ կարմիր գյուղ կառուցելու աշխատանքներին։

Դժբախտաբար շատ փոկեր չեն հասկացել և ներկայումս էլ չեն հասկանում իրենց կոչումը, իրենց անմիջական ֆունկցիաներն ու պարտականությունները և միայն զբաղված են տարին բոլոր բաշխելով ու գանձելով։ Նրանք գյուղի կուլտուրական աշխատանքներին բոլորովին չեն ոգնում, յեթե ոգնում էլ են, այն էլ բավական մեծ դժվարություններով ու դալմաղալով։ Տասնյակ դեպքեր են պատահել, յերբ գյուղի չքավորի յերեխան կամ բատրակը փոկից խնդրել են նպաստ տետրի կամ գրքի համար, փոկի նախագահն անպատասխանատու խոսքերով նրանց մերժել է և այլն։ Որինակներ շատ կան։

Այնպես վոր կուլտուրական ֆրոնտում, անգրագիտության վերացման գործում խոշոր աշխատանք ունեն կատարելու փոկերը։ Այդ բանը պետք է լավ հասկանան ու ըմբռնեն փոկերը, մասնավորապես նրանց նախագահները, և միանգամից թողնեն այն կարգոնի,

չկամ ու դիկտատորական ձևն ու մոտեցումը, վոր մինչև այսոր գոյություն է ունեցել։

ՊԱՏԺՈՂՈՎՆԵՐԸ ՑԵՎ ԿԵՆՏՐՈՆ ԷՆԴԻԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Մեր գյուղերում կանանց անգրագիտները ստկոսն ավելի խոշոր է, քան տղամարդկանցը. դրա պատճառն, իհարկե, մեզ բոլորիս հայտնի չէ։ Ցերբեք անտեղի չի ասել ընկ. Լենինը, վոր «առանց կնոջ մասնակցության չենք կարող սոցիալիզմ կառուցել»։ Ուրեմն պարզ է, վոր կինը պետք է դառնա գրագետ, բանիմաց։ Դրա համար էլ մեծ ուշադրություն պետք է դարձնենք կանանց միջից անգրագիտությունը, հին կենցաղը, անոտիապաշտությունը, կրոնական հավատը վերացնելու աշխատանքների վրա։ Յեթե վերոհիշյալ բացերը, յերևույթները չվերացնենք, այն ժամանակ մեր կուսակցությունը, խորհրդային իշխանությունը խոշոր դժվարությունների առաջ կանգնած կլինեն գյուղերում, սոցիալիստական շինարարության աշխատանքների բնագավառում։

Ահա դրա համար էլ թե կենտրոնական, թե շրջանում ու գյուղում աշխատող կուսկազմակերպությունները, կուսբնկերները, կոմերիտականները և գյուղական այլ կազմակերպությունները պետք է լուրջ ուշադրություն դարձնեն պատժողների մեջ տարվելիք աշխատանքների վրա։ Բոլոր անգրագետ և կիսագրագետ պատդամավորուհիները, նրանց հետ նաև աշխատավոր կանայք, պետք է մտնեն լիկվալանները և վերացնեն իրենց անգրագիտությունը։ Բայց և այնպես, առաջին հերթին կանանց անգրագիտության վերացման գործում խոշոր տեղը բռնում են պատժողները։

ԿԻՆՈՆ ՑԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղի աշխատավորական մասսաների անկուլտուրականությունը, հին կենցաղը հիմնովին փոխելու, հեղաշրջելու և նոր կենցաղ, կուլտուրական հեղափոխություն առաջ բերելու գործում հսկայական և անգուգական անելիքներ ունի կինոն։

Կինոյի հեղափոխական, նոր կենցաղային և դասակարգային նկարների միջոցով է, վոր մեզ կհաջողվի բազմաթիվ նորություններ տանել գյուղը, կրավել տգիտության, անկուլտուրականության և հին, ֆեոդալական կենցաղի դեմ և առաջ բերել մեր բոլորիս ցանկացած կուլտուրական հեղափոխությունը։ Հեղափոխություն, վորը հեղաշրջելու է մեր բոլոր աշխատանքները, վոր տանում ենք և տանելու ենք սոցիալիստական և կուլտուրական շինարարության ասպարիզում։

Համապատասխան որգանները պետք է ուշադրություն դարձնեն այս միակ կուլտուրական միջոցի վրա և հնար չեղածին չափ՝ անցնեն մեր յերկրի կինոֆիկացիայի գործին։ Իսկ այն հին, սոցիալական և հասարակականապես արժեք չներկայացնող նկարների մնացքն անպայման արգելել դեպի գյուղ, վորտեղ միայն և միայն այլասերում և ֆեոդալական ու հիվանդոտ սովորություններ են տանում դեպի գյուղ։ Ուստի մեր լոզունգը պիտի լինի՝ «կինոյի յերեսը դեպի գյուղ»։

ԹԱՏԵՐՈՆ ՎԱՐՊԵՍ ԵՄԵՆԵՎՈՒՅԹԻ ԽՈՒՐԵՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐԹՈՒՄ

Կասկածից միանգամայն դուրս է, վոր կինոյից հետո գյուղն առաջինն է ռադիոն, վոր կոչված է հեղաշրջելու նահապետական գյուղն իր բազմաթիվ սո-

վորությունների, նիստուկացով, ադաթներով և այլն և այլն ու նրա անփառունակ ավերակների վրա կառուցելու, ստեղծելու աշխատավոր դասակարգի, խորհրդային իշխանության ցանկացած նոր՝ կարմիր գյուղը։ Ռադիոն խոշորագույն անելիքներ ունի գյուղական մասսաների կուլտուրական կյանքի վերելքի աշխատանքներում։ Նա լե, վոր բանվորական, հեղափոխական կենտրոններից շարունակ գյուղ և բերելու թարմ լուրեր, կուլտուրա, գիտություն, նոր խոսք, նոր կենցաղ, նոր նիստուկաց և վերջապես կուլտուրական հեղափոխություն և մի նոր կենք՝ կռվելու հնի դեմ։

Խորհրդային Հայաստանի գյուղերը դեռ 7—10 տոկոսով են պատած ռադիոցանցով։ Շատ քիչ գյուղերում կան ռադիոկայաններ, վորոնց մեծ մասն էլ, դժբախտաբար, փչացել են և չեն աշխատում, շնորհիվ նրան, վոր չունենք ռադիո հրահանգիչներ, վոր շրջեն գյուղերը և փչացած ռացիոապարատները կարգի բերեն։

Ռադիոստուդիան և համապատասխան բարձր որդանները պետք է մտածեն և հոգան, վոր մոտ ապագայում մեր լեռկրի ռադիոֆիկացիայի գործը շուտ և արագ գլուխ բերվի։

Վերջացնելով մեր խոսքը կուլտուրական հեղափոխության և կենցաղային խնդիրների մասին, նորից ենք շեշտում, վոր գյուղի կուլտուրական կյանքը, կուլտուրական հեղափոխությունը պահանջում է լավ, որինակելի խրճիթ-ընթերցարաններ, բավականաչափ մասսայական-հանրամատչելի գրականություն, թատրոն, կինո, ռադիո, գյուղում աշխատող հմուտ ու յեռանդուն ընկերների կադրեր և համատարած կոլեկտիվացում։

Ուրեմն բոլորս դեպի կուլտուրական հեղափոխություն, դեպի սոցիալիզմի կառուցման անհետաձգելի աշխատանքների ֆրոնտը։

ՀՍՍՀ — ՍԵՓ
Գրադարան
Հայ. Ա. Մասիսյանի
Ս. ՄՅՈՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0120311